

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Քրեական ենթամշակույթը որոշակի խմբի անձանց մոտ ձևավորված համոզմունքների, սովորույթների և նրանց կողմից ընդունված վարքագծի կանոնների ամբողջություն է: Քրեական ենթամշակույթի (հատկապես բանտային ենթամշակույթի) արմատները սկիզբ են առնում ստալինյան «Գուլագ»-ի ժամանակաշրջանից, երբ խորհրդային քրեակատարողական համակարգում ստեղծվեցին հավաքական ճամբարներ, որտեղ գերիշխող դիրք էր գրավում հանցագործների եղբայրությունը: Դրա ներկայացուցիչները, ստանալով «օրենքով գողի» կարգավիճակ, ձեռք էին բերում իրավունքներ և արտոնություններ՝ միևնույն ժամանակ ստանձնելով պարտականություններ՝ ի դեմս եղբայրության մյուս ներկայացուցիչների:

Զնայած ԽՍՀՄ փլուզմանը՝ արդեն իսկ ձևավորված և լայն տարածում ստացած քրեական ենթամշակույթը շարունակում է գոյություն ունենալ հետխորհրդային մի շարք երկրներում, այդ թվում Հայաստանում¹:

Քրեակատարողական հիմնարկներում գոյություն ունեցող քրեական ենթամշակույթին անդրադարձ է կատարվել միջազգային հանրաձանաչ կառույցների կողմից: Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի պատվիրակությունը 2015 թվականի այցի ժամանակ կրկին նկատել է, որ այցելած քրեակատարողական հիմնարկներում առկա էր ղեկավարության և անձնակազմի կողմից քրեակատարողական հիմնարկում ոչ ֆորմալ աստիճանակարգված հարաբերությունների վերին մակարդակում գտնվող՝ ընտրված թվով բանտարկյալներին (այսպես կոչված՝ «զոն նայողներին») լիազորություններ մասամբ պատվիրակելու և քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու (նրանց շարքերում կարգուկանոն պահպանելու) համար նրանց օգտագործելու ընդհանուր միտում: Իրենց լիազորությունն իրականացնելու համար «զոն նայողներին» ակնհայտորեն տրվել էին որոշ արտոնություններ, ինչպես օրինակ՝ հիմնարկում համեմատաբար ազատ տեղաշարժվելու և ցանկացած բանտախուց մուտք գործելու հնարավորություն: Քրեական ենթամշակույթին անդրադարձ է կատարել նաև ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2017 թվականի չորրորդ պարբերական զեկույցի շրջանակներում: Նշված կոմիտեն գտել է, որ ազատությունից զրկված անձանց միջև բռնության դեպքերի բարձր ցուցանիշը կարող է լինել քրեական ենթամշակույթի և ոչ ֆորմալ հիերարխիայի արդյունքը: Ուստի, պետք է ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնցով վերջ կդրվի քրեակատարողական հիմնարկներում կարգուկանոն պահպանելու նպատակով քրեակատարողական հիմնարկի ոչ ֆորմալ աստիճանակարգված հարաբերություններից օգտվելուն:

Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակիցը կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձը, օգտագործելով իր անօրինական ազդեցությունը, տալիս է այնպիսի կարգադրություններ, որոնք ազդեցություն են ունենում այլ անձանց կյանքի, նրանց գործունեության վրա՝ անկախ նրանց համաձայնությունից, և ինչի արդյունքում սպառնալիքի և վախի ազդեցության տակ անձը զրկվում է ազատ գործելու իրավունքից: Մինչդեռ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը սահմանում է անձի ազատ գործելու իրավունքը՝ նշելով, որ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

¹ Ավելի մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգ» արտահերթ հրապարակային զեկույցը <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/1d8761660add27b847ba0f11fb66aa6f.pdf> կայքէջում (03.08.19):

Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը ներգրավելը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը լուրջ մարտահրավեր է հասարակության համար, քանի որ այդպիսի երևույթները սպառնում են խաթարել կամ աղավաղել հասարակության մեջ ձևավորված արժեքներն ու պատկերացումները:

Ավելին, պայմանավորված այն հանգամանքով, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթ կրող անձանց կողմից կատարվող որոշակի արարքների համար քրեական պատասխանատվության միջոցներ ներդրված չեն, հասարակության մոտ ստեղծվում է թյուր կարծիք առ այն, որ այդպիսի ենթամշակույթի կրողներն անպատժելի են: Չունենալով վստահություն օրենքի կամ օրենքը կիրառող սուբյեկտների հանդեպ կամ գտնելով, որ օրինական ճանապարհով խնդրի լուծման հասնելը բարդ է և ժամանակատար կամ գուցե անհնարին՝ անձինք նախընտրում են իրենց «խնդիրների» այլընտրանքային, անօրինական լուծման ճանապարհը՝ ապավինելով քրեական ենթամշակույթում ձևավորված վարքագծի կանոնների ներգործության ուժին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմքում ունենալով քրեական ենթամշակույթի բացասական ազդեցության վերացման սոցիալական անհրաժեշտությունը՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու դեմ պայքարը պետք է լինի յուրաքանչյուր պետության քրեական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը: Ընդ որում, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման, դրա կողմից սահմանված ու ճանաչված վարքագծի կանոնների տարածման դեմ պետք է դրսևորել համակողմանի մոտեցում, այսինքն՝ պետք է քայլեր ձեռնարկել ինչպես գործնական, այնպես էլ օրենսդրական մակարդակում: Այս մոտեցման կարևորագույն մասերից է կազմում գործող օրենսդրական կարգավորումների և նախատեսվող փոփոխությունների պայմաններում գործնական սկզբունքների այնպիսի համակարգի ապահովումը, որն ուղղված է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու ազդեցության նվազեցմանը՝ ընդհուպ մինչև դրա լիովին բացառմանը, քանզի ի վերջո դրանց լուծման ուղիների որոնումը հասարակության հետագա անվտանգ զարգացման գրավականն է:

Այլ խոսքով՝ քրեական օրենսդրության շրջանակներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության լայն շերտերի շրջանում այն կանխելու միտումով, քանզի պետք է գիտակցել, որ դրա դեմ պայքարը նպաստելու է միջանձնային հարաբերությունների, մարդկանց արժեհամակարգի բարելավմանը, անօրինական առավելությունների բացառմանը, ինչպես նաև պետության կողմից սահմանված վարքագծի համապարտադիր կանոնների պահպանմանը և օրինապահ վարքագծի խթանմանը:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծի կարգավորումներով առաջարկվում է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու համար նախատեսել քրեական պատասխանատվություն:

Հիմքում ունենալով իրավական որոշակիության սկզբունքի առավելագույնս պահպանումը՝ Նախագծով ՀՀ քրեական օրենսգրքում լրացվող 223.2-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել «քրեական ենթամշակույթ կրող խմբավորում», «քրեական

աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ» (այդպիսի անձ կարող է համարվել, օրինակ, քրեական հեղինակությունը, «օրենքով գողի» կարգավիճակ ունեցող անձը) հասկացությունները՝ այդպիսով ապահովելով նշված հասկացությունների բովանդակության կանխատեսելիությունը:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ հարկ ենք համարում նշել, որ Սահմանադրական դատարանը վերահաստատում է ՍԴԴ-1176 և ՍԴԴ-1213 որոշումներում արտահայտած իր հետևյալ իրավական դիրքորոշումները. «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» և «... իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կողմի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Միննույն ժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին՝ դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել, նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով: Բացի այդ, Սահմանադրական դատարանը նշել է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում:

Վերը նշվածը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային որոշումներից: Մասնավորապես՝ ՄԻԵԴ-ն իր նախադեպային որոշումներից մեկում արձանագրել է, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է («Busuioc v. Moldova», application no.61513/00, 21/12/2004):

Հարկ ենք համարում նաև նշել, որ Նախագիծը մշակելիս ուսումնասիրվել է նաև հետխորհրդային երկրների փորձը, ինչպես նաև ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան:

Այս համատեքստում հարկ է նշել, որ վերջերս համանման նախագիծ է մշակվել և ընդունվել Ռուսաստանի Դաշնությունում:

Վրաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում վաղուց նախատեսվել է քրեական պատասխանատվություն գողերի ընկերակցությանն անդամակցելու, ինչպես նաև «օրենքով գողի» կարգավիճակ ունենալու համար: Հատկանշական է, որ Վրաստանի «Կազմակերպված հանցավորության և բանդիտիզմի մասին» օրենքով էլ տրվել են «գողական աշխարհ», «գողական աշխարհի անդամ», «օրենքով գողի հեղինակությունն օգտագործելով վեճերի կարգավորում», «օրենքով գող» հասկացությունների բացատրությունները:

Վրացական փորձի մասին առավել համապարփակ պատկերացում ունենալու համար հարկ ենք համարում անդրադարձ կատարել ՄԻԵԴ նախադեպային պրակտիկային, մասնավորապես՝ «Աշխարհան ընդդեմ Վրաստանի» թիվ 45554/08 գանգատին: Նշված գանգատի շրջանակներում ՄԻԵԴ-ն արձանագրում է, որ անշուշտ, համապատասխան ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «գողական աշխարհի» գոյությունը և գործունեությունը արատավորել են ոչ միայն բանտային հատվածը, այլև լայն տարածում են ստացել Վրաստանի հանրության շրջանում՝ ներառելով խոցելի անդամներին, հատկապես երիտասարդներին: Հաշվի առնելով այս ուսումնասիրությունները և Վրաստանի կառավարության ներկայացրած փաստարկները՝ ՄԻԵԴ-ը նկատում է, որ հանցավոր երևույթն այնքան խորն էր արմատավորված հասարակության շրջանում, և «օրենքով գողերի» հասարակական հեղինակությունն այնքան բարձր էր, որ շարքային անդամների շրջանում «գողական աշխարհ», «օրենքով գող», «օրենքով գողի հեղինակությունն օգտագործելով վեճերի կարգավորում», «օբյեկտ» և այլ հասկացություններ համարվում էին ընդհանուր գաղափարներ և լայնորեն ընկալելի էին:

ՄԻԵԴ-ը նշել է նաև, որ բավականաչափ հետաքրքիր է, որ Վրաստանի օրենսդիր մարմինը այդ հանցագործությունների իրավական սահմանումները տալիս խոսակցական

լեզուն պահպանելու ուղին է ընտրել: ՄԻԵԴ-ի կարծիքով՝ դա ակնհայտորեն արվել է՝ քրեորեն պատժելի նոր հանցագործությունների էությունը հանրության կողմից ավելի հեշտ ընկալելի լինելն ապահովելու համար:

ՄԻԵԴ-ը նկատում է, որ 2005 թվականի դեկտեմբերի 20-ի օրենսդրական փաթեթի նպատակն էր ընդլայնել կազմակերպված հանցավորության դեմ պայքարը:

Բացի այդ, օրենսդրության կարևոր մասերից էր այդ փոփոխությունների կատարման օրն ընդունված «Կազմակերպված հանցավորության և բանդիտիզմի մասին» օրենքը, որի 3-րդ բաժնում համակողմանիորեն մեկնաբանված են հասարակությանը արդեն ծանոթ այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «գողական աշխարհ», «գողական աշխարհի անդամ», «օրենքով գողի հեղինակությունն օգտագործելով վեճերի կարգավորում», «օրենքով գող» և այլն: Հետևաբար ՄԻԵԴ-ը համարում է, որ Վրաստանի քրեական օրենսգրքի 223.1-րդ հոդվածը, երբ դիտարկվում է «Կազմակերպված հանցավորության և բանդիտիզմի մասին» օրենքի 3-րդ մասում ամրագրված հասկացությունների իրավական սահմանումների հետ համակցության մեջ, շարքային անձի ուշադրությանն է արժանացնում քրեական նոր հանցագործությունների բոլոր անհրաժեշտ բաղադրիչները՝ կապված «գողական աշխարհի» գործունեության հետ: Այդպիսով, ապահովվում է նաև իրավական որոշակիության սկզբունքը:

Միաժամանակ, առաջարկվում է, Նախագծի կարգավորումներին համահունչ, համապատասխան լրացում կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լուծելով լրացվող նոր հանցակազմերի ենթակայության հարցը:

Վերոգրյալից զատ, հարկ է նկատել, որ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ և 223-րդ նախատեսված հանցակազմերի դեպքում դրսևորել է տարբերակված մոտեցում թե՛ ծանրացնող հանգամանքների նախատեսման, թե՛ խրախուսական նորմերի կիրառման դիտանկյունից: Ըստ այդմ՝ առաջարկվում է, սույն Նախագծով առաջարկվող կարգավորումներին համահունչ, նշված հանցակազմերը լրացնել ծանրացնող նոր հանգամանքներով, ինչպես նաև նախատեսել խրախուսական նորմ բանդայում մասնակցելու մասին քրեական հետապնդման մարմիններին կանոսին հայտնած և դրա գործունեության խափանմանը նպաստած անձի համար և վերջինիս ազատել քրեական պատասխանատվությունից, եթե նրա գործողություններն այլ հանցակազմ չեն պարունակում:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ հնարավորություն կստեղծվի առավել արդյունավետ, լիարժեք և վճռական պայքար մղել քրեական ենթամշակույթ երևույթի գոյությունը բացառելու ուղղությամբ՝ այդպիսով ապահովելով հասարակական անվտանգությունն ու պետության կողմից սահմանված վարքագծի համապարտադիր կանոնների պահպանումը: